




«ԹՈՂ ՏՈՒՆԻՔ ՄԱՆԵՐ ՏՂՈՅՔ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ» : ՂՈՒԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ո Ր Գ .

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ . ՀՈԿՏԵՄԲԵՐ 1 . 1875 .

ԹԻՒ 10



ցին խորհել թէ հոս բնակեցաւ Դաւիթ թագաւորը, հոս Սողոմոն բոլոր իւր փառաց մէջ թագաւորեց, հոս մարգարէք կը պատէին և ժողովուրդը կը սարկեցնէին, և մանաւանդ մեր Տէրը Յիսուս իր աշակերտներն առնելով այս լեռը կ'ելլէր, կամ այն պարտեզը կը պտտէր, և հոս այս բըլուրներէն մէկուն վրայ փոխանակ աշխարհիս մեզայ չարչարեցաւ և մեռաւ: Բայց թող մէկը չխորհի թէ Երուսաղէմի մէջ սուրբ կեանք վարել աւելի դիւրին է քան թէ Ի Պրուսա կամ Ի Խարբերդ: Երուսաղէմի օդին մէջ մասնաւոր բան մը չկայ որ զմարդիկ մեղքէ պահէ: Տղայ մը, որոյ սրտին մէջ Աստուծոյ սէրը թագաւորելով Աստուծոյ պատուէքները պահել կուտայ անոր, ամենէն համբերատար ուխտաւորէ մ'աւելի սուրբ կրնայ ըլլալ: Վասն զի ոչ թէ տեղը ուր մարդ կը գտնուի կը սրբացնէ զանի, այլ Աստուծոյ շնորհքը: Մէկն Աստուծմէ շնորհք խնդրելու համար Երուսաղէմ երթալու սպասելու չէ, վասն զի տղայ մը կամ որ և իցէ ուրիշ մէկն երբ իր սրտին մէջ Աստուծոյ շնորհքն ունի, ուր ալ ըլլայ կըրնայ երջանիկ ըլլալ:

**ԱՌՍԿ ՄԸ**

Մարդ մ'անտառին մէջ ծառի մը ճիւղեր կը կարէր, որպէս զի զանանք բեռ մ'ընելով իւր տունը բերէ: Մեծկակ խուրձ մը ժողովելէն ետքը կապեց զայն, և կռնակն առնելով փորձեց տանել, բայց տեսնելով որ բեռը շատ ծանր է վար դրաւ: Գնաց նորէն ճիւղեր կտրեց, և բերաւ իր բեռին վրայ դրաւ: Դարձեալ փորձեց զայն տանել, բայց չկրցաւ: Նորէն

**ԵՐՈՒՍԱՂԵՄ ԵՎՈՂ ՈՒՒՏԱՒՈՐՆԵՐ**  
Ամէն տարի Թուրքիոյ այլ և այլ կողմերէն հարիւրաւոր և հազարաւոր ուխտաւորներ Երուսաղէմ կ'երթան այցելելու այն տեղերն, որոնք այնպէս կը ցուցուին որ մեր Տէրոջ Յիսուսի Քրիստոսի տանջուած մեռած և թաղուած տեղերն են, Վերի

պատկերը կը ցուցնէ քանի մ'ուխտաւորներ որոնք Յոպպէյէն Երուսաղէմ կ'երթան: Բլուրի մը կատարը հասած են, ուստի քաղաքը կրնան տեսնել, և հոն ուրախութեան ազդակներ կը հանեն:  
Շատ զուարճալի է Երուսաղէմ պտտելու երթալ և հոն եղած միջո-

ուսեր կորելով իր բեռին վրայ աւելցուց, ապա վերստին այն բեռը տանել փորձեց : Այս բանը շատ անգամ կրկնելով բեռն այնչափ խոշորացաւ որ չկրցաւ տեղէն իսկ խախտել :

Վերջապէս բեռն անհասարկն շեղ մ'եղաւ, մարդը յուսահատական ճիգ մ'ըրաւ որպէս թէ զայն պիտի կրնար վերցնել, բայց իր անդամները չդիմացան և իր բեռին տակ իննալով մեռաւ :

Այս ճիշդ նկարագրութիւն է այն մարդոց վիճակին, որոնք իրենց մեղաց բեռը ճանչնալով հանդերձ ապաշխարութիւնն օրէ օր կը ձգեն : Միշտ իրենց բեռը աւելցնելու վրայ են, և մինչև այն կէտը կը հասնին որ ալ Աստուծոյ թողութեանն յոյսերնին կորելով, իրենց մեղքերովը կը մեռնին :

Մեղաց բեռը աղայութեան ատեն թեթեւ է . ուրեմն ձեր բեռն այն ատեն վերցուցէք, երբ թեթեւ է . տարէք զայն Տէր Յիսուսին աղօթելով ու աղաչելով որ նա ձեր վրայէն առնէ զայն և զձեզ պահէ մեղաւոր կեանք վարելէ : «Քու Ստեղծիչդ երիտասարդութեանդ օրերուն մէջ յիշէ : »



ՓՈՔՐԻԿ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Այս աղանին ինչ կ'ընէ, եթէ պատահանին քո՞նք երթալով ձեռքդ դուրս հանես աղանի մը քեզ կուգայ : Ոչ, Հապա ինչու եկաւ այս աղանին այն մարդուն քով որ իր ձեռքը պատահանէն դուրս հանեց, Վասն զի աղանին երթալու ուրիշ տեղ չունէր :

Այս այն աղանին է զոր նոյ ջրհեղեղէն ետքը տապանէն արձակեց, և այս ձեռքն ալ նոյայ ձեռքն է որ աղանին ներս տապանը կ'առնէ :

Երկիրը ջրով ծածկուած ըլլալով, աղանոյն հանդէս տեղ չկար, ուստի ետ դարձաւ տապանն եկաւ :

Նոյ այս աղանին դուրս զըրկելէն առաջ ագուաւ մ'ալ զըրկած էր, ագուան ետ չդարձաւ, բայց հեղիկ աղանին մըրկալից և դառնալունչ օդը չիբելուն համար ետ դարձաւ, նոյ ալ զայն ներս առաւ : Բայց նոյ կ'ուզէր գիտնալ թէ երկիրը ցամաքած է, ու ինքը կրնայ դուրս ելլել, վասն զի նոյայ կինն, որդիքը և հարսները տապանին մէջն էին, ուր կային նաև ձի, ոչխար, արջաւ և ուրիշ շատ մ'անասուններ, որոնք գրեթէ ամբողջ տարի մը տապանին մէջ փակուած մնալով դալարագեղ դաշտեր և ցամաք տեսնելու շատ կը փափաքէին : Ասոր համար եօթն օր ետքը նոյ դարձեալ աղանին դուրս զրկեց, աղանին ետ դառնալով ճիւղ մը բերաւ : Տապանին մէջ գանուղները նորէն ճիւղ մը տեսնելով որչափ ուրախացած ըլլալու են : Ամբողջ տարի մը բնաւ տերև տեսած չէին, ուստի ամէնքն ալ անտարակոյս շատ անհամբերութեամբ կը սպասէին դուրս ելլելու ժամանակին : Ետքը մ'ետքը նոյ աղանին դարձեալ դուրս զրկեց, և այս անգամ թռչնիկն ալ ետ չդարձաւ : Ասկէ յայտնի եղաւ որ ջրհեղեղէն արուած ծառերն ու խոտերը վերստին աճել սկսելով աղանին կրնար այն երկրին վրայ բնակել, ինչպէս որ քանի մը շարաթ առաջ ալ ագուաւը կրցած էր : Բայց Աստուած տապանին դուրս գոցած էր, և նոյ գիտէր թէ, մինչև որ Աստուած իրեն յիտի, բանալու չէ, այս պատճառաւ կ'սպասէր : Վերջապէս Աստուած անոր ըսաւ. «Տապանէն դուրս ելիր, դուն ու քու կնիկդ և քու որդիքդ և քու որդուոցդ կնիկները քեզի հետ : Քու հետդ եղող ամէն կենդանին, թէ թռչունները, թէ անասունները և թէ երկրի վրայ սողացող բոլոր սողունները քու հետդ հանէ : » Ամէնքն ալ տապանէն դուրս ելան :

Ջրհեղեղէն ետքը նոյ երկրի վրայ իր առաջին օրն ինչպէս սկսաւ : Աստուծոյ շնորհակալութեան և փառաբանութեան զս մատոյց : Ուրեմն մենք ալ, որ նոյայ զաւակներն ենք, Աստուծոյ շնորհակալ ըլլալով և փառք տալով սկսինք մեր օրերը :

57 ՄՈՒԿԵՐՈՒՆ ՎՆԱՍԸ

1. Տիկին Մարինոս հարուստ տիկնանց զգեստ շինելով ապրուստը կը ճարէր, բայց ասով հազիւ թէ կ'ապրէր. ~~գիտնալու էր որ~~ ~~պէտքէն~~ ~~տապանէն~~ հանգիստ վիճակ մը չունէր :

Երբ գործելով իր ~~ապրուստին~~ համար պէտք եղածէն աւելի ստակ առնէր, այս խենդուկ կնիկը ~~այս~~ ստակն ազբատաց բաշխել սովորութիւն ըրած էր : Խենդուկ կնիկ կոչեցի զայն, ~~վասն~~ զի բոլոր իր դրացիները կ'ըսէին թէ ազբատաց ~~պէտքէն~~ շատ ստակ կուտար, մինչդեռ ինքը հարուստ չէր : Բայց ազբատներն անոր համար խենդ է չէին բսեր, ես կը կարծեմ որ Աստուած ալ այս բարեսիրտ Մարինոս տիկինը խենդ չէր համարեր :

3. Սակայն քիչ մը զարմանալի բան է, որ այնչափ շատ ստակ կուտար հիմա, մինչդեռ ժամանակաւ ազբատաց ստակ տալու մասին կծծի էր. և ամենէն զարմանալի կէտն այն է որ երբ հարուստ էր աւելի քիչ կուտար : Այն ատեն տիկին Մարինոս իր հարուստ հօրաքրոջ հետ իմիսմին կ'ապրէր, և ամէն ուզած բանն ունէր. և որովհետև այն ատեն իր սիրտը բնաւ նեղութեան մէջ ինկած չէր, նեղութեան մէջ եղողներուն նկատմամբ ալ բարեսէր զգացմունք բնաւ չէր ունենար : Բայց երբ իւր հօրաքրոջը մեռաւ, ինքը միտակ և անօգնական մնաց, իր հօրաքրոջն իրբև աղջիկ էր, և անոր բոլոր ստացուածքը պիտի ժառանգէր : Սակայն հօրաքրոջը մեռած ատեն ~~ստացուածքը~~ չգըտնուեցաւ . ասէր պարտքի համար ծախուեցաւ, և Մարինոս տիկինն, ինչպէս ըսի, իբր ապրուստը ճարելու համար աշխատելու ստիպուեցաւ . և երբ ազբատութեան ինչ ըլլալը հասկըցաւ, այն ատեն առաջին անգամ սկսաւ ազբատներուն վրայ խղճալ և անոնց ստակ տալ :

5. Այն երկրին մէջ, ուր կը բնակէր տիկին Մարինոս, Ծննդեան օրը տօն կը բանէին. ուստի Ծննդեան օրէն օր մը առաջ իբր ճանչած քանի մը աղքատներուն տունը դնաց որպէս զի ծննդեան պարգև ընելու նպատակաւ անոնց համար պատրաստած զգեստները տանի տայ : Այն պարգևները տալէն ետքը պարտապ քսակով բայց երջանիկ սրտով տուն դարձաւ : Երբ սենեկին դուռը բացաւ, տեսաւ որ երեք հատ մուկ տախտակամածին վրայէն կը փախչէին : Այն տունն ուր

G.

կը բնակէր տիկին Մարինոսի հին տուն մէջ, և մուկերը հոն անոր շատ անհանգստութիւն կը պատճառէին հացն ուտելով, կօշիկները կը ծեղծէր և կերակրոց դարակին մէջի խնձորները աւրելով, Տիկին Մարինոս չէր կրնար գտնել այն ծակն ուր մուկերը կը բնակէին, որպէս զի չուտով անոնց գործած փաստուն վերջ մը տայ:

7. Այն իրեկուն, որ տիկին Մարինոս մուկերը տեսաւ, ինքնիրեն ըսաւ, «Եթէ հօրաքրոջս ստակը գտնէի, այնպիսի սենեակ մը կ'առնէի, ուր մուկերը չկարենային գալ»: Եւ այն ատեն խորհեցաւ, որ եթէ աղքատներուն այնչափ շատ ստակ շտայ կրնայ աւելի վարձ վճարել, և աւելի աղէկ սենեակ մը մէջ բնակիլ: Բայց տիկին Մարինոս այնչափ բարեխիտ էր որ իր այցելած աղքատաց աւելի քիչ ստակ չէր կրնար տալ. ուստի և այն խորհուրդներն իսկոյն թողուց, երբ սենեակն մէջէն կ'անցնէր, այն երեք մուկերէն մէկն որ բանի մը համար հոն մնացած էր, մագլցելով պատուհանի քովի պատէն վեր ելաւ. և տիկին Մարինոսի հօրաքրոջ հին ձորձերէն մէկուն տակ անյայտ եղաւ: Տիկին Մարինոս այդ ձորձը ոչ թէ հազնելու համար, այլ իւր հօրաքրոջն իբրև յիշատակը կը պահէր: Վաղեց այն ձորձին քով գնաց, և դայն մէկգի նետեց որպէս զի մուկին ուր երթալը տեսնէ, և թէ շատ անգամ փնտռելով չգտած ծակը գտնէ, հոն տիկին Մարինոս նոր բան մը գտաւ. մուկը հին ձորձին մէջ կը ծեղծէր:

Ծակ մը բացած էր, և մուկերէն կըրծուած քանի մը թուղթի կտորներ ալ տեսնելով, զգուշութեամբ անոնց վրայ նայեցաւ, և իր հանգուցեալ հօրաքրոջ հին ձորձին պատուհան մէջ իւր հօրաքրոջ արժէթուղթերը գրտաւ. այս արժէթուղթերը հօրաքրոջ կենդանութեան ատեն շատ փնտաւած էին, բայց չէին կրցած գտնել և հիմա մուկերուն կը ծեղծէր բացած ծակէն դուրս երևան եկած էին «Այսպէս տիկին Մարինոս վերջապէս ստակն առաւ ու աղէկ սենեակ մը վարձեց, և հարստանալով աղքատներուն վրայ ունեցած բարեխիտ գուժը չպակսեցուց. և այնուհետև միշտ կըրէր թէ մուկերուն տուած փաստն երբեմն այնչափ գէշ փաստ չէ:

ՉԻՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՈՒԹԻՒՆ

Հիւսիսային Չինաստանի Տօ-Լանսի մեհնիսն մէջ բազմաթիւ նուագածուներ կուց պաշտամուն ներկայ կը գտնուին: Ամէն տեսակ սրինգ և փողեր ու ամէն մեծ ու թեամբ թրմուկներ ունին: Թմբուկներէն ոմանք այնչափ մեծ են որ մարդ մը կրնայ անոնց մէջ բնակիլ, փողերէն երկուքն ալ հինգ կանգուն երկար ըլլալով թնդանովներու պէս անուոյ վրայ կը դրուին, և այն փողերը փչող քուրմերը անոնց ներքեւ երկրի վրայ կը պտուկին: Նուագածուներն գեղեցիկ դեղին զգեստներ հագուած քուրմեր են: Երբ քուրմերն այսպէս մեծ ալմուկ հանելէ կը յոգնին, անոնց ծանաները ամաններով թէյ կը բերեն, իւրաքանչիւր քուրմ գաւաթ մը թէյ առնելով կը խմէ և վերջը իրենց երկրպագութիւնը կը շարունակեն:

ՄԻՄՈՆԻՆ ԱՆՁՐԵՒՈՏ ՕՐԸ

1. Անցեալ շաբթուն օր մը, Միմոնին հայրն ու մայրը մտքերնին դրած էին որ զանի լեռան գլուխը փռուց դռն ըսուած տեղը տանին: Բայց այն առաւօտուն երբ Միմոն անկողինէն ելաւ, ցաւով տեսաւ որ սաստիկ անձրեւ կը տեղաք: Խեղճ Միմոն երեսը կախած պատուհանին քով նստաւ, վասն զի ինչպէս որ դուրս ալ ձեր սիրած մէկ զուարճութենէ զրկուելուդ համար կը ցաւէր, նոյնպէս և Միմոն յուսովրէպ ըլլալուն համար տխուր էր: Մակայն Ամմոն գիտէր նաև որ լալ ու հելին օգուտ մը չընէր. ուստի փողոցէ ի վեր հեղեղի պէս վազող ջուրը կը դիտէր լուծեամբ, Հայրն ալ քովը նստած էր: Միմոն հօրն ըսաւ, «Նայէ, ջուրն ինչպէս կը վազէ»: «Այո», ըսաւ հայրը, «Այս ջուրն ուստի կու գայ»: «Անձրեւն», պատասխանեց Միմոն, «Անձրեւն ինչ է», հարցուց հայրը, «Չուր է», ըսաւ Միմոն: «Եթէ տղու մը որ այնպիսի երկրէ մը կու գայ ուր բնաւ անձրեւ չի տեղաք, ըսես: Չուրն անձրեւ է, ու անձրեւը ջուր է, տղան այդ խօսքէն բան մը կը հասկնայ», ըսաւ հայրը, և նորէն հարցուց, «Անձրեւն ուստի կու գայ»: «Ամպերէն», պատասխան տուաւ Միմոն: «Անձրեւն ինչպէս ամպերն ելած է», հարցուց դարձեալ հայրը: «Չեմ գիտեր», ըսաւ Միմոն: «Ուրեմն կըրնանք այս օրու ան վրայ զուարճայի խօսակցութիւն մ'ունենալ: Ձեռքդ պատուհանէն դուրս հանէ», ըսաւ հայրը Միմոնին: Միմոն ձեռքը պատուհանէն դուրս երկրնցուց, և բոլորովին թրջած ետ քաշեց. զգեստին թեղանիքը կամ թեւերն ալ անձրեւ թրջած էին: Միմոն ձեռքը շարժարին սրբելով չորցնել կ'ուզէր, բայց հայրը շիտուց զանի, և ըսաւ, «Վաւարանին քով եկու, և այս ջուրը ետ ամպերուն զրկենք»: Միմոն հօրէ խօսքը մտիկ ըրաւ, և հայրը ըսաւ անոր, «Ձեռքերդ կրակին բռնէ»: Միմոն այսպէս ընելով տեսաւ որ ձեռներուն վրայ եղած ջուրն անյայտ եղաւ: «Չուրն ո՞ր գնաց», հարցուց հայրը: «Չորցաւ», պատասխանեց Միմոն: «Ի՞նչն չորցաւ կըսես անոր համար որ պահ մ'առաջ ձեռքդ թոյց էր, և հիմա չէ, բայց ջուրը չկարսուեցաւ, այլ օդին մէջ



ԳՍՅԼ ՄԸ

Այս պատկերն Ամերիկայի գայլի մը պատկերն է: Թէև կերպարանքը անվեհեր ու վայրագ է, սակայն ինքըն իրօք վախկատ ըլլալով, գաւազանով մը անոր վրայ յարձակող տղէ մ'անգամ կը փախչի: Ծառ տեսակ գայլեր կան. որոնցմէ ոմանք Ամերիկայի գայլերէն շատ աւելի ահարկու են, վասնզի գուր ամէնք ալ գիտէք որ շատ անգամ ձմեռ ատեն գայլերն սլխարներ կ'ուտեն և երբեմն ալ անգէն մարդեր: Բուսիոյ մէջ ուր ձմեռն սաստիկ ջուրտ է, մարդիկ գայլերու հետ կանոնաւոր պատերազմ ունին: 13 թիւ շաբաթական Աւետարները Բուսիոյ մէջ գայլ որսացող քանի մը որսորդներու պատկերը տուած է:

մոն ձեռքը պատուհանէն դուրս երկրնցուց, և բոլորովին թրջած ետ քաշեց. զգեստին թեղանիքը կամ թեւերն ալ անձրեւ թրջած էին: Միմոն ձեռքը շարժարին սրբելով չորցնել կ'ուզէր, բայց հայրը շիտուց զանի, և ըսաւ, «Վաւարանին քով եկու, և այս ջուրը ետ ամպերուն զրկենք»: Միմոն հօրէ խօսքը մտիկ ըրաւ, և հայրը ըսաւ անոր, «Ձեռքերդ կրակին բռնէ»: Միմոն այսպէս ընելով տեսաւ որ ձեռներուն վրայ եղած ջուրն անյայտ եղաւ: «Չուրն ո՞ր գնաց», հարցուց հայրը: «Չորցաւ», պատասխանեց Միմոն: «Ի՞նչն չորցաւ կըսես անոր համար որ պահ մ'առաջ ձեռքդ թոյց էր, և հիմա չէ, բայց ջուրը չկարսուեցաւ, այլ օդին մէջ

լուծուեցաւ, այնպէս որ դուն չես կրնար տեսնել. զգեստիդ թեղանիքին նայէ՛)» Սիմօն թեղանիքին նայեցաւ. և թրջած մասը տակաւին չորցած չէր. բայց անկէ ծուխի պէս բան մը կ'երևէր. «Հող կրնաս տեսնել որ չուրը կ'երթայ կը խառնուի օդին մէջ որ միշտ ծարաւի է.» բաւ հայրը. «Անձրիը զգեստդ թրջեց, կրակն ալ զգեստիդ վրայ գանուած անձրևի չուրը օդին մէջ կը լուծանէ. օդն ալ չորսի կ'առնէ որ վայն ետ դրկէ, երբ նորէն անձրև գայ.» «Կը հասկնամ որ այս անձրևը նախորդ անձրևէն առաջ եկած է.» բաւ Սիմօն, «Ա.յո, այնպէս է» բաւ հայրը. «Ա.յոսինքն երկրի վրայ գանուած չուրը միշտ օդին մէջը լուծուելով, անկէ իբրև անձրև դարձեալ երկրի վրայ կու գայ, բայց ինչպէս անձրև կ'ըլլայ.» «Հոգ վը վայն վար կը մղէ կը բերէ.» բաւ Սիմօն. «Հոգն անձրևին հետ շատ վերաբերութիւն ունի, բայց երբեմն հով չեղած ատեն ալ անձրև կու գայ, դիտես որ քու շունչիդ մէջ աք բաւական չուր կայ.» բաւ հայրը. «Ոչ, չգիտեմ.» բաւ Սիմօն. «Ա.յո, ինչպէս բոլոր օդին մէջ նայնպէս նաև քու շունչիդ մէջ չուր կայ.» բաւ հայրը. «Հայելին ինձ բեր, և ես քեզ ցուցնեմ թէ յինչպէս կ'ըլլայ որ օդին մէջ լուծուած չուրն անձրև կ'ըլլայ.» «Հայելին վրայ շունչ տուր», բաւ, երբ Սիմօն հայելին բերաւ. երբ Սիմօն հայելին վրայ շունչ տուաւ, հին քիչ մը մէզ երևցաւ որ շատով անցայտ եղաւ. «Ա.յո միայն մէկ ամպ մ'է. անձրև յառաջ բերելու համար շատ ամպեր պէտք են. տասն անգամ շունչ տուր հայելին վրայ.» բաւ հայրը. Սիմօն հօրն ըսածին պէս ըրաւ. բայց զարմանօք տեսաւ որ ձեռքին վրայ բնաւ չուր չկար. «Ինչո՞ւ ձեռքիս վրայ չուր չեկաւ.» հարցուց Սիմօն. Հայրը բաւ, «Ամառը շունչը չես կրնար տեսնել, մինչդեռ ձմեռը բերնեղ ծուխի պէս գուրս կ'երևէ.» Տարութիւնն է որ չուրն օդին մէջ կը լուծանէ, և ցրտութիւնն է որ օդին չուրը վար դրկել կու տայ. Տար ձեռքիդ վրայ շունչ տուիր և բան մը չեկաւ, բայց երբ ցուրտ հայելին վրայ շունչտուիր, հայելին վրայ չուր եկաւ. Անձրևն ահա այն ատեն կու գայ, երբ լուծուած ու անտեսանելի ջրով լի տար օդը ցուրտ օդի կը հանդիպի, անտեսանելի չուրն իբրև ամպ տեսանելի կ'ըլլայ, և երբ շատ ամպեր մէկտեղ կու գան, կաթիլներ իբրև անձրև կը տեղան :

— Գէշ խօսիլն երբէք մարդու մը գոյզն աղէկութիւն չէ ըրած: Ոչ որ գէշ լեզու գործածելուն համար աւելի հարուստ, աւելի երջանիկ և աւելի իմաստուն եղած է: Ա.յոսիս լեզու մը բնաւ մէկը հաճելի չընծայեր այլոց, կրթեալ մարդոց նողկալի ու բարիներու ալ զգուելի է :

ՍԱՆԴՈՒՂ ՏԱՆՈՂ, ՄԱՐԴ ՄԸ



Մանր տեսած էք մարդ մը, որ սանդուղ մ'առած կը տանի. Սանդուղը կուսակին կամ ուսերուն վրայ կը դնէ, և կամ թերևս իր գլուխը աստիճաններուն մէջէն անցնելով իւր բարանիւր կողմը մէջ մէկ ուսին վրայ գրած և աղէկ մը հաւասարակուած կը քալէ կ'երթայ, եթէ մարդ մը այս կերպով սանդուղ մը տանի բազմամարդ փողոցի մը մէջէն, ինք կը նեղուի և փողոցէն անցնողներուն ալ շատ անգամ մեծ նեղութիւն կը պատճառէ. Առջևէն կ'զգուշանայ որ սանդուղին ծայրը մարդու չբարձի, բայց ետին չիկրնար տեսնել որ հին ալ զգուշանայ. եթէ առջևը զանուղ մարդու մը չգարնելու համար սանդուղին առջևի ծայրը մէկ կողմ դարձնէ, կրնայ ըլլալ որ միւս ծայրը երկու մարդու զարնէ կամ պատուհան մը և ուրիշ անոր նման բան մը կ'առնէ. Սանդուղ տանող մարդու մը քովէն անցնողները միշտ իրենց գլուխը շախտակելու կամ գոնէ ֆէտերնին վար ձգելու վախ կ'ունենան :

Մենք ալ սանդուղի նման երկու ծայրեր ունեցող բաներ չենք կրեր. Ա.յո, անձնատիրութիւնն այն տեսակ բաներէն մէկն է. Երբ կին մը տախտակամաճը լուսլէն ետքը չուրը պատահանէն գուրս կը թափէ, չուրին միայն մէկ կողմը կը տեսնէ, միւս կողմը չտեսնիր, և չխորհիր ալ թէ պատուհանէն վար թափուած չուրը վարը մարդու մը վրայ վազելով անոր զգեստները կ'աղտոտէ. Երբ Շուշանն որ բաղմոցին գլուխը կը նստէր քիչ մը իր տեղէն շարժի, և Ստեփան երթայ շատով անոր տեղնստի, Ստեփանն միայն իր կողմը նայած կ'ըլլայ, որ է ամենէն հանգիստ տեղը նստիլ. Շուշանի կողմն երբէք չխորհիր, այսինքն չխորհիր թէ նա որչափ պիտի վերադառնար որ իր տեղն առնուեցաւ. Գէշ սովորութիւններն ալ «երկու ծայր» ունին. Տղայ մը երբ գինի խմել կ'սկսի, գինի խմելէն յառաջ եկած բերկրութիւնը միայն կը տեսնէ, բայց սանդուղին միւս ծայրը չի-

տեսնիր. չի գիտեր թէ որչափ կը վիրաւորէ իր ծնողաց սիրտը և իրեն համար վիշտ կը պատրաստէ. Յիշեցէք որ ամէն սանդուղ երկու ծայր ունի :

ՀԱՆՆԵԼՈՒԿԻՆ ՊԱՐԳԵՆԸ

Անոնք, որ անցեալ ամսոյ տղայոց Աւետարեցի մէջ հրատարակուած հանելուկին պատասխան գրել կ'ուզեն, պէտք է յիշեն որ պարզեւր ոչ թէ պատասխանն ամենէն առաջ զըրկողին պիտի տրուի. Ա.յոսիս ընելով մենք կ'ուզենք որ աղայք ինչպէս որ հանելուկին պատասխանը գտնելու կ'աշխատին, նայնպէս աշխատին նաև որչափ որ կրնան աղէկ բացատրելու :



ԿԱԼՊԱՇ ԾԱՌԸ

Երբ մուրացիկ տէրիջ մը տեսնէք, ուշադրութեամբ դիտեցէք այն սև ամանն որուն մէջ կը լեցնէ իրեն արուած կերակուրը. Ա.յո ամանը շատ կարծր է և քարի կը նմանի. Արդարև այնչափ կարծր է որ մարդիկ երբեմն անոր մէջ կերակուրալ կ'եփեն :

Պատկերին մէջ տեսնուած ծառը այն ծառն է որոյ վրայ զը բուսնին այս բաները. Ասանք պտղոյ մը կեղեւներն են. Ա.յո ծառը քանի մը տար երկրներու մէջ կ'աճի, երկար տեղերներ, գեղին և ճերմակ ծաղիկներ ունի, պտուղն ալ դեղի համար կը գործածուի :

Ամերիկայի միսիսսուրաց ընկերութեան կողմէն  
Խմբագիր Ժ. Բ. Կրին

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ  
Ձագագործար, Յակոբեան խան, Թիւ. 12.